

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 Ֆր.

Վեցամսեայ . . . 6 Ֆր.

ԱՐՏԱՍՈՒՄԱՆ

Երկու քիւմիկ ծրարով

Տարեկան . . . 14 Ֆր.

Վեցամսեայ . . . 7 Ֆր.


ԱՍԵՐԻԱ

Տարեկան 2.60

Վեցամսեայ 1.50 Տոյար »

ԿԱՆԵԻԿ

Մանուցման տողը
20 սանթիմ



ՀԱՅԿ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ

ՀԱՍՑԷ

Redaction du journal

Ir vounk

VARNA (Bulgarie)

Редакция

НАВѢСТНИКЪ

Ирвонк

ВАРНА

Գրութեանը կտ չեմ
տրուիր

ԿՈՎԿԱՍԸ

Կովկասէն կրկին վրդովեցուցիչ լուրեր կը հասնին .

Շփոթութիւնները կը շարունակուին Կովկասի մէջ . Մարտ 15ին Պաթումի մէջ թշուառական պաշտօնեայ մը աւազակներէ յարձակում կրեց . 2,000 ռուպլի գողցուեցաւ . Ամսոյս 17ին իւրաքանչեւ տեղի ունեցան Երեւանի Հայերուն և Թաթարներուն միջեւ . Այս վերջինները միջիթ երթալու ատեն կրակի հարուածներու բռնուեցան Հայերու կողմէ պատահաններէն և տուներու վերնայարկերէն . Ոչ մէկ Թաթար չ'սպաննուեցաւ . սակայն յուրջ շփոթութիւն մը տեղի ունեցաւ . բոլոր խանութները գոցուեցան . Զգտեալ վիճակ մը կը տիրէ . Թաթարներու և Գրառարարներու միջև ծագած հակամարտութիւնը կը շարունակուի . Երեւանի Կովկասի մէջ իրենց հարկ կայ սր մենք մեր փոքր ուժերն չլատելու տեղի տանք անխոհեմ և խենթութիւնով .

Բեդրապարկ, 19 Մարտ
Շփոթութիւնները կ'իմանայ թէ մարտ 18ին Բագուի մէջ նոր անկարգութիւններ պատահած են . անշուշտ հայ գոմիթներէն առաջ եկած . Զերբակալուած են 39 անիշխանականներ և դեռ ուրիշ անձեր .

Եւրոպական թերթերու հաղորդումով այս հեռագրաւորները սահմանուած են ամէն Հայաստանի թուրք հանելու . անոնք երկու կողմէ կազմուած թէ Բագուի կոտորածը վաղանցուկ դէպք մը ըլլալէ հետեւ . կուգայ բանալ արեւմտահայերէն շրջան մը Կովկասի մէջ ծայրէն մինչեւ միւսը . և այս անգամ տեղի տուողները Հայերը կը ըլլան . եթէ չը հաւատանք Նոյսի վրեժիս ռուս հալածանքի թերթին . պատճառ մը չունինք չը հաւատալու Թաթարներ . որ կը վկայէ թէ Թաթարները մզկիթ երթալու ատեն Հայերէն գնդակի բռնուեցին Երեւանի մէջ .

Եթէ չը հերքուի Հայերուն նախարարական ըլլալու այս պարագան . առանց երկբայելու կըրնանք ըսել թէ այդ յիմար և դատապարտելի քայլը հին Հըն-

չակեաններու և Գրառարարներու գործն է . քանի որ այս երկու յեղափոխական կուսակցութիւններն իրենց կը վերագրեն միշտ Կովկասի մէջ ամէն յանգուգն գործ որ ունէ հայու մը ձեռքով կը կատարուի . մանաւանդ զէնք կրելու և գնդակ արձակելու քաջագործութեան փառքը այդ երկուքը իրարմէ կը խլեն .

Վերջապէս Երեւանի դէպքի մասին Թաթար հաղորդածը ճիշդ ենթադրելով . դատապարտելի և ազատութիւն կը գտնենք Հայերուն այդ քայլը . որ թէ' կառավարութեան Հայոց դէմ անվերապահ հալածանք մը սկսելու նոր շրջան մը պիտի բանայ և թէ Կովկասի բաղձալի իսլամ բնակչութիւնը Հայոց դէմ պիտի գերազուգի . Բագուի իսլամներու նախարարականութեն յետոյ գոյացած հաշտութեան դաւելով .

Միշտ բաղձալով որ վերի հեռագրաւորներուն հերքումը հասնի—որ սակայն ուշացաւ 3—4 օրէ ի վեր—նողկանք կը զգանք երբ մտածենք թէ հայ տարրին անգործութիւնը ապահովելու նպատակաւ կազմակերպուած ունէ մարմին կամ կուսակցութիւն անխոհեմութիւնը կուսնայ նորանոր անկարգութիւններու տեղի տալու այն տեսակ երկրի մը մէջ . ուր հայ տարրը փառամասնութիւն կը կազմէ բաղձալու միջոցով իրենց քաջալերող և աշակցող ունին մեզ թշնամի կառավարութիւն մը . եւ եթէ մտածուի թէ զոհերը երկուստէք հաւասար իսկ ըլլան և ռուս կառավարութիւնը իբր հայալինջ պետութիւն մը դատապարտուի քաղաքակիրթ աշխարհի առջեւ . ի՞նչ շահ կրնանք ակնկալել մենք այդ կռիւէն—Տիրող ռուս վարչութեան տապալումը . Սաւրէն իր օրհասականին մէջ կը գտնուի . ռուս ազատականները այդ գործը ստանձնած են և առանց Կովկասահայուն խրտուսեցումն ալ անոնք իրենց ձեռնարկը գլուխ հանելու վրայ են . շնորհիւ ճարտարական ջանքերի յաղ-

թանակներուն . Այս պարագային մէջ ի՞նչ հարկ կայ որ մենք մեր փոքր ուժերն չլատելու տեղի տանք անխոհեմ և խենթութիւնով .

Կը մաղթենք . ի խորոց սրտի կը մաղթենք որ չը հաստատուի Կովկասի ունէ կէտին վրայ Հայոց նախարարական լինելու լուրը . եթէ ոչ այդ վերջին և մեծագոյն աղէտի մը նախադուռը պիտի ըլլայ հայ յեղափոխութեան անունով բացուած .

ԹՈՒՐԷԻՈՅ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

Այս ընդհանուր վերնագրին տակ նպատակ ունինք թուրքիոյ քաղաքական կացութեան . երկուստէ վիճակին . ծովային և ցամաքային սպառնալիքներէն . երկրագործութեան . հանրային պարտքին և հանրագումարին մասին . յատուկ գլուխներով տեսութիւններ ընել . երկուստէ նոր տարւոյ անթիւ . որ ինչպէս յայտնի է՝ մարտ 1ին (Հ. Տ.) տեղի կուսնայ և պետական բոլոր հաշուետւորները կը նորոգուին .

Ա .

ԿԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Դեռ մտաւոր անցեալին մէջ . թուրքիոյ արտաքին քաղաքականութիւնը շատ անապատ կացութեան մը մատնուած էր . բայց այսօր այդ խաւարած մած ամպերը փառատած են և թուրք գիւտակցութիւնը հանգիստ չունի մը առնելու վրայ է . Ասոր պատճառները թէպէտ շատ են . բայց գլխաւորը՝ Ռուսիոյ այս պահուն Մ. Արեւելքի մէջ պատերազմով զոհած ըլլալն է . Ռուսիա թուրքիոյ գոյութեան սպառնացող միակ պետութիւնը ըլլալով . անոր այսպիսի զօնակ կացութեան մը մատնուիլը . յայտնի է թէ՝ որքան նպաստաւոր է թուրքիոյ .

Եւ Ռուսիոյ այդ կացութիւնը . պատճառ եղած է . որ Եւրոպայի ուշադրութիւնը զէպի կոմիւնկիոսի հայրենիքին կողմը գտնայ . Հետեւաբար . թուրքիա այսօր Եւրոպայի հանդիսավայրը ըլլալէ զաղրած է . գոնէ առ այժմ . Ու թուրքիոյ նման երկչոտ . մեղկ և յանցապարտ տէրութեան մը համար . ասկէ առաջ բաղձալու որ կեանք մը կարելի չէ յուսալ .

Քաղաքականութեան մը կը հետեւի . իր թոյլ նախարարութեան չ'որհիւ և էտուարտ թագաւորի միակ բողձանքն է օտար պետութեանց հետ լաւ յարաբերութիւններ ունենալ . Ու պէտք չէ մոռնալ որ . երբ գիւտակցութիւնը այդ կարգի նպատակի մը ծառայէ . այն ատեն արգարութիւն . մարդասիրութիւն և քաղաքակրթութիւն բառերը իրենց արժէքը կը կորսնցնեն . Գերմանիան ալ իր յաւիտենական սուլթանահանձն ընթացքն մատ մը իսկ չուզեր չեղիլ . այլ . կը ջանայ օրէ օր աւելի ամրացնել իրենց միջեւ հաստատուած այդ կապը . Եւ չ'ոտար ինչու այդպէս չ'ընէ . քանի որ այդ ընթացքն վնաս մը չը տեսաւ . այլ միշտ շահեցաւ . Գալով Ֆրանսային . անկախ ծառայուն Գ. զօրագոյ արկածախնդրութեան տխուր հետեւութիւնները փառատելու և անցեալ սխալներէն երբ ուղղելու դժուար աշխատութիւնովը կը տուայտի դեռ . Նախկին Գ. սխալ քաղաքականութիւնը և Գերմանիոյ հետ պատերազմը . պարտութեան ֆրանսան որ Ռուսիոյ հետ գիւտակցի և այդ գիւտակցութեան յաղորդեց փոխադրութիւնը . որոց գումարը միլիարդներ կը հաշուուի . Ու ամենէ տխուր պարագան սա է որ . այսօր Ռուսիոյ ներկայ վիճակը այդ գրամներուն ապահովութեան երաշխիք մը ըլլալէ հետեւ է . Ուստի Ֆրանսա կ'աշխատի կարելիութեան սահմանին մէջ . իր գիւտակցը խոհեմութեան և քաղաքակրթութեան ընտիր արահիսներէն առաջնորդել և կերպով մը իր միլիտաները ապահովել . Հետեւաբար թուրքիոյ մասին խորհելու ժամանակ չ'ընի առ այժմ . իսկ Աւստրիա . իր ներքին բարդ ինքրները ունի . որոնք վերջապէս օր մը պիտի պայթին . Թերեւս միանց ժողովի մահէն հետք . Բայց վերջապէս այսօր ի վիճակի չէ արկածախնդրական քաղաքականութեան մը հետեւելու . Իտալիա Հապէսիտանին հետ ունեցած իր ձախող պատերազմէն ի վեր խաղաղութեան կուսակց մը եղած է . մանաւանդ Վիկտոր Էմմանուէլի օրով բոլորովին խաղաղ զարգացման նուիրած է ինքզինքը և ամենէն աւելի կ'աշխատի իր անտեսական շատ տկար գիրքը բարեփոխելու ատոր է՞ն թարմ և զօրաւոր ապացոյցն է երկրագործական կաճառի մը հաստատութեան համար վիթխոր Էմմանուէլի ունեցած նախաձեռնութիւնը . որ խաղաղութեան համաժողովին անյաջող ելքէն աւելի ընտիր և օգտակար ըլլալ կը խոստանայ երկրագործութեան նման շատ բնական և օրհնեալ արհեստի մը . Այսպէսով կարծես Իտալիա կը նախանձի իր քաղաքին . Զուրկերիոյ . որը փոխանակ սին փառքերու հետեւելու . իր երկրին և հպա-

տակներուն զարգացման եւ քաղաքակրթման ու յառաջդիմութեան կը յատկացնէ իր խորհրդարանական նիստերը եւ երկու երկիրներու միջեւ բացուած նոր երկա՛ր փապուղին թեւեւ աւելի նպաստէ այդ գրացի երկիրներու իրարու բարեմասնութիւնները իւրացնելու բարի նախաձեռնողութիւնը։ Բայց վերջապէս ամէն պարագայի ըստ իր ի վիճակի չէ որեւէ պատճառաբանութեամբ մը Թուրքիոյ հետ գէշ մարզ ըլլալու։

Իսկ միւս կողմանէ Թուրքիան չըրջապատող փոքրիկ տէրութիւններն ալ քաղաքական այս անպատու կացութիւնէն բռնադատեալ, եւ ունի արդէն կամաւ, միշտ նորանոր շողորդութիւններով Սուրթանին առջեւ քննելու ետեւէ են։ Իսոնցմէ զատ, Թուրքիան լաւ յարաբերութիւններ կը մշակէ նաեւ Պէլճիքայի, Հոլանտայի, Հապտիստանի եւ ուրիշ երկրորդ կարգի պետութիւններու հետ։

Ամենուս ծանօթ է արդէն թէ՛ Թուրքիոյ քաղաքականութիւնը ըսելով, անոր վեհապետին քաղաքականութիւնը պէտք է հասկնալ։ Եւ Թուրքիոյ այդ միահեծան տէրը, այսպիսով չը բաւականանալով, լաւ յարաբերութիւններ կը մշակէ նաեւ Հնդկաստանի եւ Զինաստանի հետ ուր մահմետականներուն հետ եւ ընդհանուր մահմետականութեան կ'ըդունացման կը ձգտի։ Կովկասէ, Կրէտէ եւ ուրիշ տեղերէ հասնող գաղթականներ խնամով կը զետեղուին հանգստաւէտ եւ բերրի վայրերու մէջ, այլ եւ այլ անանձանցորդներով։ Նոյնպէս Անատոլիոյ աշիրէթները հրախուսապարտ են նորամիտ այս խալիֆային, որ իրենց աղոց համար յատուկ վարժարան մը հաստատած է եւ անկէջ ելած չըջանաւարաները, մինչեւ կայսերական թիկնապահութեան աստիճանին կը բարձրացնէ։ Այդ աշիրէթները արդէն արտապայրի տուրքէ զերծ են։ Ու իրենք ալ իրենց կարգին, վայելելով այս ամէն արտօնութիւններէ ու զիւրութիւնները Մուհամմէդի խալիֆային հիւսնապահները զարձած են եւ անոր կամքը կատարելու պատրաստ են ամէն ժամանակ։

Եւ սակայն, այս ամէն արտաքին երեւոյթները որքան որ շատ վարդապետն ցոյց կուտան Թուրքիոյ կացութիւնը, զփառադարար կամ բարեքաղաքայր այդ վիճակին հասնելէ հեռի է ան։ Եթէ արտաքին փայլուն չպար մը ունի ան իր վրայ, ներքինապէս փտած պտուղ մըն է սակայն։ Որովհետեւ Թուրքիոյ ներքին քաղաքականութիւնը, մանաւանդ տնտեսական վիճակը նախանձելի բան մը չունի իր մէջ։ Միւս կողմանէ ձանձրացողիչ ըլլալու չափ միօրինակ խլատութիւն մը կայ, որ բարոյական մարդը կը սպաննէ։ Այս ծանր լուծը շատ քիչ թուրքեր անորինակ հեղութեամբ մը, կամ աւելի ճիշդը սպառնութեամբ մը կը տանին։ Մեծամասնութիւնը զփոքն է այս յոռի ընթացքն ու իրենց զփոքնութիւնը չեն ծածկեր ամէն անգամ, երբ առիթը ներկայանայ մտերմական տեսակցութեան մը միջոցին։ Ու կան այնպիսիներ ալ, որոնք աւելի յանդուգն խառնուածք մը ունենալով, թուրքովին կը թօթուեն այդ լուծը եւ արտասահման կապաստանին, ազատ շունչ մը առնելու համար։ Եւ ասոնց թիւը օրէ օր աւելնալու վրայ է, ինչպէս արդէն օրը օրին կը գրեն տեղական թիւթերը՝ այս կարգի զէպեր։

Իսկ երբ անցնինք Թուրքիոյ հպատակ ազգաբնակչութիւններէն (ոչ-մահմետական) տարրերուն, հոն ալ միեւ-

նոյն զփոքնութիւնը պիտի տեսնենք ներկայ ընթացքն ու ինչպէս հակառակութիւն մը, որ անշուշտ օր մը պիտի պայթի վերջապէս... Թուրքիոյ մէջ ոչ-մահմետական հասարակութիւններէն կը գտնուին՝ հայը, յոյնը, հրէան եւ պուլկարը։ Ուրիշ կարգ մը մանր ժողովուրդներ ալ կան թէեւ, բայց ատենք կարեւոր նշանակութիւն մը չեն կրնար ունենալ որ եւ է առթիւ, իրենց ներկայ թուահամարով եւ տնտեսական վիճակով։

Արեւելցի

ՊԱՏԵՐԱԶՍԸ

ՅԱՂԻՈՒԱԾ ՌՈՒՍԻԱՆ

Մոսկովէն վճռական ճակատամարտը կրնանք ըսել թէ վերջնականապէս վճռեց ողբ քանակին ճակատագիրը։ Պարտուած Ռուսերու ողջ եւ ազատ մնացած մասը՝ հալածութիւնով յաղթական թշնամիէն, իր պաշարները այրելէ եւ ռազմամթերքներն մեծագոյն մասը ձգելէ յետոյ Մոսկովէն թիւրիկ խուճապեց, հոնկէ ալ այսօր իր շուշը իրապէս առնել կը ջանայ, չարունակ սարսափած շուրջը նայելով թէ մի գուցէ թշնամին իրեն հասնի, եւ որպէսզի ողբ զինուորը ապահով ըլլայ այդ մասին իր անցած ըտր կամուրջները կը քանդէ, կայրէ թշնամին անցքը յապաղեցնելու նպատակաւ։ Երբ այս խուճապին մէջ կ'ըլլին մը բերանէն կամ ըլլին մը գազաթէն յանկարծ ճարտական թիւրանթի մը թնդիւնը լըսուի, ողբ զինուորը առանց ընդգիծութիւն փորձելու անձնատուութեան կարճ ու ապահով ճամբան կընալէ այլեւս չէ որ ընդհարումի մը փորձը անվրէպ զինք պարտութեան եւ հաւանականապէս մահուան պիտի մատնէ։

Այսօրեք այս վիճակին մէջ կը գտնուի Մայր. Արեւելցի ողբ քանակին միացողը։ Միքատօի մայրիկ զօրքիւրջ անխնայ, անընդհատ կը հաւածեն հսկայ Ռուսերը եւ վճռած են մինչեւ իրապէս հետապնդել զանոնք, չուրջ 100 հազարամէթր տարածութեան գծի մը վրայ գիշեր եւ ցերեկ հեւ ի հեւ յառաջանալով։ Թօքօնէ հեռապիւր մը իմացուց նաեւ թէ՛ ճարտ. ինժեանութիւնը մտադրած է, իր նախկին ծրագրերը ընդլայնելով, իրապէս ալ անգին հալածել թշնամին իր յաղթութիւնէն կատարելապէս օգտուելու նպատակաւ։ Բայց ճարտի այս մտադրութիւնը նպատակէ չեղում եւ արկածախնդրութիւն կը նկատեն կարգ մը ռազմապետներ, որովհետեւ ներկայ պատերազմին նպատակը Ռուսերը Մ. Արեւելքէն հեռացնելու մէջ կը կայանար, ինչ որ կատարելապէս յաջողեցաւ։ Նաեւ արկածախնդրութիւն պիտի ըլլայ աւելի առաջ երթալ, քանի որ ճարտերը որչափ զէպի հիւսիս յառաջանան այնչափ աւելի կը զփռալանայ իրենց յարաբերութիւնը մայր հայրենիքին հետ, իսկ Ռուսերունը ընդհակառակը կը գիւրանայ ամէն տեսակէտով։ Արեւելք մարաշախտ Օհաման՝ որ Նաբոլէօնի համբաւ ստացաւ իր վերջին յաղթանակովը, միեւնոյն յանդգնութիւնը պիտի ունենայ ողբ քանակը մինչեւ Զարբու մայրաքաղաքը հալածելու։ Բայց այդ յանդգնութեան վախճանը եղբրական եղաւ ֆրանսական բանակին, նոյնը կրնայ պա-

տահիլ ճարտականին. այո՛, Նաբոլէօն իր զէպ ողբ զինուորէն զատ «գորավար ձմեռը» ունէր, Օհամա ալ ամայի եւ անհուն տարածութիւն մ'ունի կտրելու իր առջեւ։

Ռազմական հանճարին հետ խոհակա-նութեան տաղանդը չը պակսիր անշուշտ ճարտն սպարապետին քով։ Ուստի աւելի հաւանական կը թուի որ Օհամա իրապէս գրաւելէ յետոյ իր յառաջնադասը դադրեցնէ։ Սիրէն իրապէս Երեւելով Վլատիմուսօքն ալ ցամաքէն ուսակա՛ւ հաղորդակցութեան զրկած կըլլայ, որով կատարելապէս կը պաշարուի այդ նաւահանգիստը, որ իր միտկ երկամուղիի զծովը դեռ շատ օգնութիւններ ստանալ կը յուսար իրապէսին ճամբով։ Ուստի իրապէսին անկումը դեռ քանի մը օրուան, իսկ Վլատիմուսօքնը շատ շատ քանի մը ամսուան գործ պէտք է նկատուի։ Եւ ճարտն դեռ ամբողջ տարի մը եւս պատերազմը շարունակելու պատրաստութիւն ունենալ իր նախարարին բերանով առջի օր յայտարարեց։

Չէնքին բաղդը երբ այսպէս ճարտն կը փայտի ի միտս Ռուսերոյ, կ'ըստական տեսակէտով ալ նոյն բաղդաւորութիւնը ունենալ կը թուի Միքատօյի պետութիւնը, որ այժմ Անգլիոյ եւ Ամերիկայի մէջ նպաստաւոր պայմաններով նորանոր փոխառութիւններ կ'ընելու համար ամէն զիւրութիւն կը վայելէ, եւ նոյն իսկ Գերմանիոյ մէջ ճարտական փոխառութիւն մը այսօր յաջողած է գրէթէ. քայլ տարաբաղդ Զարի կ'առաջարկուին ըտր գրամատանց գիններ իր առջեւ գոց կը դանէ։ Իր զանազան ֆրանսան իսկ մերթեջ նոր փոխառութիւն մ'ընել, որովհետեւ առջի արուածներն ալ վրայ երթալու երկրորդ ֆրանսացիները կը տաքնապեցնէ։ Ռուս ելմտական նախարար Գորոքցիով արտաքին փոխառութիւնէն այլեւս յոյժ կ'ըրած ենք թիւ փոխառութեան դիմեց 200 միլիոն ռուպլիի համար։ Բայց սեղանաւորները այն տեսակ ծանր պայմաններ գրին որ, այդ ալ առայժմ անկարելիութեան մասնուեցաւ։ Հիմակ կ'առաջարկուի ողբ եկեղեցիներու հարստութիւնները պատերազմական ծախսեց գործածել, եւ այս յաջողեցնելու համար խորհուրդ կը տրուի Զարին որ ներկայ պատերազմը «սրբազան պատերազմ» յայտարարէ, որպէս զի արդարանայ եկեղեցիներու հարստութեան պատերազմի ի հաշիւ գործածումը։ Այդ հարստութիւնը Միլեարի կը հասնի եղեր եւ որ աւելի պատեւազմական տուգանքի սահմանուած ըլլալ կը թուի։

Հայ եկեղեցւոյ կալուածները գրաւող ողբ պետութեան այս արտաքին վիճակին առջեւ հայ մը ինչ երկիւղած մտածումներու անձնատուր չըլլար։

2 Ե Կ Ո Յ 3

Մեր բաժանորդներէ մէկ մասին պարտադանցութիւնը մեզ հարկադրած է մեր պաշտօնեաներէն Պ. Յակոբ Ազապարը ճամբորդութեան հանել, Պուրկազ — Զիրիպէ — Սօֆիա գծին վրայ եւ չըջա-կալքը գտնուող քաղաքներու մեր բաժանորդներէն բաժնեկրն գանձելու համար։

Մեզ այս արտաքին զոհողութեան պարտաւորող մեր ընթերցողները պէտք է թերանան իրենց ստացած թերթին արտէքը գոնէ այս առթիւ վճարելու։

ԱՐԶԱԳԱՆՔ ԱՄԵՐԻԿԱՅԷ

(ԴՐՕՇԱԿԵԱՆ ԺՈՂՈՎ ՄԷ)

Իրաւ որ աւելի անարգ աւելի անպատեւ բան մը չէր կրնար ըլլալ քան ներկայ ըլլալը Դրօշակեան հրապարակային ժողովի մը եւ հոն լսելու հանդուժել ստոյթներէն, հայոյութիւններու, ինքնագովութիւններու, պլըֆներու երկար, անհատնում եւ ձանձրացող չարքը եւ նոյն ատեն խորհիլ թէ կան սա ներկաներ ու մէջ տխմարներ ոչխարամիսներ որ կը հաւանին այդ խօսուածներուն եւ կը հաւատան անոնց ճշգրտութեանը ու անկեղծութեանը։

Բայց ասկէ շատ աւելի զոնդակ եւ անհանդուժելի բան մըն է այդ ժողովին նկարագրութիւնը գրել, առանց հոն խօսուածները վերլուծած ատեն չի կատարելու։ Բայց մենք այս ներկայութիւնը յայտնութիւն գէթ անգամ մը կարգա-ցած ըլլայ անոնց ժողովներուն իսկական նկարագրութիւնը։

Այդ իրիկուն այդ ժողովին պիտի չըթալայն ներկայ եղողներուն երեք չորրորդը եթէ չը գիտնային որ հոս խօսողներէն մին Վառնան ըստած մարդուկը պիտի ըլլար։

Է՛ կընէնք այս պարտն իր տար-տան մը խորհրդածոր բացակայութե-նէն առաջ շատ մը պլըֆներ կ'ըլլէր եւ հոս այս նոյն բեմէն կըսէր. — Ինչ կուզէք, գործ կուզէք, ահա գործը հրապարակի վրայ է. մարդ կուզէք. — ահա մարդերը, կոռուդները, զէնք կուզէք, ահա զէնքերը ինչու չէք միանար Դաշնակցութեան. հոս այս նոյն բեմէն էր որ ալ թրքահա-յաստանի բացատրութիւնը եղած կատարուած բան մը ըլլար իբր թէ, կովկասի հայութեան վրայ խօսելով կըսէր. — Ռուսիան՝ երբեմին Բաբելոնացի Նաբուգոդոնոսոր թագաւորին շինած պլըֆէ արձանն է որուն ոտքերը կաւ են, զօրաւոր հարուած մը բաւական է այդ արձանը տապալելու։ Եւ յետոյ կ'ըլլին Ռուսիան պատմա-կան կենդանի մը նմանցնելով կը-սէր. — անոր փորքին մէջն է կովկասի հայութիւնը սուրը ձեռք, այդ կենդանիին հիւանդ պահուն օր մը ան իր երկաթայրի սուրով պիտի ձեղքէ փորը եւ դուրս նետուի։

Եւ կը խորհէինք մենք մեզի որ հի-մայ անկից աղբին շատ փամփուկ ան-ցած է, շատ մը զէպեր պատահած են, այն տեսնէն մինչեւ հիմայ հայ-րենիքին մէկ կորովի ու պատմական մասը քարուքարեղ եղաւ, մեծ դաւառ մը ամբողջ արեւմտեւ ներկայեցաւ պո-ռոտափոփութիւններու եւ ցուցադրու-ման շնորհիւ, հայութեան յոյսերէն մին ջախջախեցաւ հայաստան խճա-րին փառաբերութիւններուն գոհացու-մին համար։ Եւ հիմայ այս բոլոր բա-նեքն վերջ արդեօք ինչ պիտի գտնայ ըսելիք այս պարտն. ինչպէս պիտի արգարացնէ ինքզինք եւ իր խճաղը, արդեօք պլըֆներու չըլլան ընդամ-նէ թէ կ'ըլլին բեմերէն պիտի շարունակ-ուի ան ինչպէս կը շարունակուի դեռ իրենց թեմերուն մէջ։ Ահա այս խորհրդածութիւններով էր որ ժողովին սովորականէն աւելի ջաղ-մութիւն մը գացեր էր այս անգամ։

Ատենախօսութեան եւ ճառախօսու-թեան մը վերջը, որոնց մասին չար-ծեր իսկ խօսք մը ըսելի բեմ բարձ-րացաւ պարտն. Նորէն նոյն մար-դը, իր երկար, արկածալից հերո-սական բացակայութեան վերջ շատ մեծ փոփոխութիւններ չի տեսնեք

իր վրայ թեւեւ, բայց քանի որ մասն փոփոխութիւններ նշմարեցինք: Մեզի աշխատութեան թէ աւելի գիտցիր եւ թզուկներ էր, դէմքը աւելի երկնցներ էր, ճակտին վերեւի մագերը աւելի նոսրացեր էին եւ ձեռքերնուն մատները աւելի բարակցեր, երկարեր եւ շատեր էին: Երկու բաներ միայն փոխուած չէին, իր խօսելու անընդունակութիւնը եւ պըրլֆնիւրը (յղացուիք եւ երկուքն ալ աւելի չափազանցուած իր խօսածներուն զլխաւոր կէտերը եւ յետոյ ընկնք մեր քննադատութիւնները անոնց մասին: Մենք ոչ իր բերանը սուտ խօսք պիտի դնենք եւ ոչ ալ պիտի չափազանցենք: պիտի ըսենք ինչ որ ըսաւ բազմութեան մը ներկայութեան: Այսպէս սկսաւ իր խօսքերը— Անցեալ տարին ես հոս չի, չեմ գիտեր ինչեր պատահեցան հոս, ինչպէս տարի մը ունեցաւ զուր, բայց 1904ը հայ տարեգրութեան ամենէն փառաւորը, ամենէն միջիմարականը եղաւ: Տարի մը եղած չէ որ հայ ժողովուրդը այնքան յուսալու պատճառներ ունենայ որքան այդ տարին: Ամբողջ Ռուսական Հայաստանը եւ Արեւելեան Հայաստանը յեղափոխեցաւ: Դաշնակցութեան շնորհիւ: Կարգ մը մարդիկ չափ մը բաներ կը անէին կը գրեն մեզի համար, ես անոնց դրածները կարդացած չեմ եւ ոչ ալ խօսածները լսած եմ, միայն անկրկնեցու մէջ խօսածներէն լսելովքս, անոնք մեզ Ազգասպան կը կոչեն, բայց բնաւ չեն ըսեր թէ ինչո՞ւ, քան չեն ըսեր թէ ինչ կերպով կրնայիք գործել որ այդ ջարդերը չի պատահին: Անոնք մեզի բնաւ չօգնեցին, զէնք չի տուին եւ հիմայ ալ հաց չեն ուզեր տալ Սասունին:

(*) Ընթերցողները ներողամիտ թող ըլլան որ այս բառը շատ յաճախ կը կրկնուի հոս: ատկէ աւելի յարմար բառ մը չիկայ տակաւին անոնց հաւաքին ստութիւնները եւ անհնարին չափազանցութիւնները որակող:

սունին: Փափազեանք Անդրանիկը «Էլիսիան» կոչեց, ինքնապաշտպանութեան յանձնարարին հակառակեցան, Սասունի ինքնապաշտպանութեան օգնելու համար Պոսթոնի մէջ Հնչակեաներէ, Չէզոքներէ եւ մեզմէ կազմուած յանձնախումբը իր գործը չի շարունակեց: Կարգ մը մարդիկ Սասունը եւ անոր շրջականները պատահած աղէտը շատ կը չափանցեն եւ ժողովուրդին աչքին սոսկալի երեւցնել կը ճշնին: Այդպէս չէ սակայն: Ամբողջ Սասունի մէջ 1894 էն մինչեւ հիմայ հազիւ 5000-7000 հայ ջարդուած է: Այս շատ չնչին բան մէ: Օրինակ առնենք Խարբերդը որ ապստամբած չէ, միթէ նուազ փնտռուած է Սասունէն: Խարբերդէն 35000 հայ գաղթած է, արտասահման ասիական ջարդէն աւելի սոսկալի է, ուրեմն Սասունը չէ թէ փնտռուած է, ամենէն օտուած տեղն է եղած: Եւ ով կըսէ որ Սասունը ամբողջովին բնաջինջ եղած է: Բնաջինջ եղած տեղը միթէ զօրանցներ եւ աշտարակներ կը չինն: Սասունը այսօր ձորէն կազմ եւ պարսպատ է եւ քիչ ատենէն յեղափոխուելու պատրաստ (*): Անոնք այսօր սովէն է որ կը տառապին, Սասունի գոթաղջութիւնը այդ սովն է միայն: Մենք էինք որ տարիներ առաջ Սասունի վերանորոգման մասնաշնչեցինք եւ զայն պատրաստեցինք: Տր. Բէյնոյս որ Վանէն այդ նամակը կը գրէ ազէտ տխմար մէ: Օր մը երբ Բիւրա մը զինք կողոպտել կուղէ Տր. Բէյնոյսս կըսէ անոր—Աւետարանին մէջ գրուած է մի կողոպտել ընկերդ, ինչո՞ւ զիս կը կողոպտես: Ասիկայ օտար մըն է: Ուրիշ տեսակ օտարներ ալ կան սակայն, անոնցմէ մին է Մր. Ապերտիս, որ Անգլիոյ բառամէջիքին մէջ ըսաւ—Այն ազգը, որուն պատիւը, կեանքը եւ ստացուածքը փառնուի մէջ են միշտ, այն ազգը իրաւունք ունի յեղափոխութեան դիմելու:

Յուսահատելու պէտք չիկայ. ամբողջ Կովկասի հայութիւնը մեզի հետ եղաւ եւ մեզի հետ է. առանց անոնց

բան մը չենք կրնար ընել մենք: Կովկասի խնդրոյն հետ կցուած է Հայրիկի պատգամաւորութիւնը, մենք էինք որ համոզեցինք Հայրիկը որ այդ զործին ձեռնարկեց: Բոլոր Ռուսահայերը եւ Արեւելեան Տաճկահայաստանի ամբողջ 2,000,000 ժողովուրդը Դաշնակցութեան հետ եւ անոր հետեւն է, ինչ կայ յուսահատելու: Ես Կովկաս եղած միջոցս ամչցայ տեսնելով մեր Ռուսահայ եղբայրներուն զոհողութիւնները եւ անոնք ձեռք պատմելու համար էր որ Ամերիկայ եկայ կրկին. եկայ ըսելու որ զուր ալ պէտք է զօհէք եւ աշխատեք: Եկէք միացէք Դաշնակցութեան, այդ է ահա իրական միութիւնը:

Ահա այս էր իր խօսածներուն կամարը, որոնց չափէն աւելի կարեւորութիւն տուած եղանք հոս համապատասխանող զանոնք:

(Շարունակելի)

Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ի

ՍԻՒՍՏՐԷԻ ՈՐԲԱՆԱՄ
ՅԱՆՆԱՍԻՍԻՍԷԻՆ

1904 փետր.—6 էն մինչ 1905, փետ. 28ը

ՄՈՒՏՔ

Տիկիչ Հաճի Զարիք Հաճի Համբարձումեան 12 ֆր. Տ. Տ. Հ. Մ. Թարութիւնեան 12. Մ. Արապաճիւնեան 4. Ա. Փափազեան 10. Կ. Ս. Թօրաքալեան 2,50. Զ. Մ. Թօրաքալեան 4. Մ. Թովհաննէսեան 2. Թ. Տիմիթրով 1. Տ. Բաթրանճիկ 2. Կ. Բաթրանճիկ 50 սանթիմ. Ի. Թէօֆոլ 1. Բ. Բատէլի 1. Վօրժ. Մայս. Պ. Տիմիթրով 1. Տ. Ի. Բոճապաշով 2. Բաթրիկան Բոնիթէ 1. Բոնիթէ 50 սանթիմ. Տիմանտօրու 3. Ա. Պապաճանօֆ 2. Մ. Ն. Սլաւիչ 3. Վաթիլէ 1. Ս. Պաքալով 1. Բաթիկան Ծօրով 1. Ն. Բատովի 50 սանթիմ. Բ. Բարակէօրիկէ 1. Եղը. Սիտէրի 3. Ն. Տալիսով 1. Տ. Բաքալեան 5. Հունգար. Ակէնթը 1. Տօթթօր Կիկօֆ 1. Աթաթէլի 1. Բօրուլիք Տիմիթրով 2. Տ. Բ. Բատէ 2. Տ.

Վըլէֆ 5 ֆր. 50 սանթ. Կ. Մ. Պօղոսեան 2 ֆր. 50 սանթ. Մ. Թ. Բապաշովեան 3. Զ. Թ. Ղազէրեան 2 ֆր. 80 սանթ. Փ. Բապաշովեան 1. Հաճի Թ. Զրէրեան 1. Օ. Ս. Փափազեան 2. Գ. Սիմոնեան 2. Թ. Հաճի Ղազարոսեան 1 ֆր. 50 սանթ. Ղ. Թաղարեան 3. Ս. Ապազեան 1. Թ. Գուլուսեան 2. Ս. Բարսեղեան 2. ի. Ուտանիկեան 1. Ս. Զարգարեան 1 ֆր. 50 սանթ. Թ. Գուլուսեան 1. Ն. Ղանչէկիւ 50 սանթիմ. Թ. Թաղարեան 50 սանթիմ. Պ. Աւագեան 20 սանթիմ. Թ. Թովակիմեան 1. Ա. Օ. Մէրտումեան 50 սանթիմ. Ա. Կարապետեան 1 Ս. Հաճի Գրիգորեան 50 սանթիմ. Թ. Մարգարեան 50 սանթիմ. Թ. Թորոսեան. Մ. Թէրզեան. Մ. Մ. Բէօթէնէլեան. Թ. Թարութիւնեան. Հալէպեան. Թով. Թարութիւնեան. Մ. Թաղէոսեան. Տիրացուեան. Մ. Լալէեան. Թ. Մէրտումեան. Թ. Թօթաքալեան. Ուն. Ուն. Մ. Օհանեան Մ. Թէլէկրաֆճեան. Կ. Աղաթէկեան. Մ. Մարգարեան. Զ. Թովմասեան Թ. Գ. Թովհաննէսեան. 50 ակն սանթիմ. Գ. Մարուկեան 1. Զր. Գ. Աղաճեան 1. Թ. Լալէեան 1. Մ. Թիւթիւնեան 1. Ա. Գուլուսեան 2. Կ. Պապաճեան 1. Ա. Հաճի Ստեփանեան 4. Ե. Կարապետեան 2. Գ. Թ. Վարդանեան 1. ի. Զարեան 1. Թ. Մարգարեան 2. Ամբողջ գումարն է 148,55 ֆրանք:

ԵԼՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԱԽՔ

1904 փետր 6-էն մինչ 1905, փետրուար 28 28,55 ֆր

Կ. Պոլսոյ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր զրկուած, մէկ մանուշաքօրով թիւ 62325. 120 ֆրանք. գումարը 148,55 ֆրանք.

Որբախում Թանձախումբը
Մ. Թաղարեան. Թ. Մրտումեանեան Գ. Աղաճեան. Թ. Զ. Թօթաքալեան. Թ. Արապաճեան. Թ. Մարգարեան. Եւազրճեան.

Սիւստրէ, 28 փետր. 1905

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

15

ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՅ

(Շար. նախորդ թիւէն)

Տէր Թուսիկ ինքն ալ արդէն այս տեսակ լուրեր ունէր Պոլիս գտնուող իր աշակերտներէն: Անոնք հոն «Ընկերութիւն» կազմած էին. եւ ինքը Արշամի անոնց յանձնարարած էր: Վարժապետին նամակէն մակարեկեց թէ ամէնքը մէկ տեղ կը գործէին: Պոլիս երթալու հարկը ստիպողական երեւցաւ: «Ժամուռ» պարտքը վճարելու հանգանակութեան մը» համար անապահովութեան յանձնարարագիր առնելով անմիջապէս մեկնեցաւ:

Սեւ ծովուն վրայ հիւսիսային քամին այդ շաբաթ օրը ահագորէն կը փչէր: Շոգեմաւր չկրցաւ կէսօրին նեղուց հասնիլ իրիկուն արեւը մտած պահուն—ըստ թրքաց՝ 12 ին—Վոսիփոր մտաւ: Տէր Թուսիկ գիշերը շոգեմաւն անցուց: Առաւել նաւակ մը նստելով մաքսատուն ելաւ: Մէկ երկու բեռնակիր եկան ձեռքը պագին: Խնդրեց Պատրիարքարանին ճամբան իրեն ցոյց տալ: Նախ ազգին պաշտօնատունը պիտի ներկայանար:

—Նա, կեղծան, անոնց հետ գնա՛, ըսաւ բեռնակիր մը:

Հայաստանի բեռնակիրներ խումբ խումբ եղած Մայր եկեղեցին կերթային: Տէրտէրն մահիճն ու դուրճը մաքսատան հայերուն քով թողուց ու զացողներուն ընկերացաւ. չորս կողմը դիտելով կը քալէր ապշած: Կը սուրային բաց կառքեր, որոնց մէջ բազմեր էին ոսկեճամուկ զգեստով թիւրքեր: Ազգային նախանձը սրտէն «ախ» մը խլեց: Իր հետաքրքիր հարցումներուն պատասխանեցին, թէ Պոլիս ամէն ատեն այսպէս իրարանցումի մէջ չէր, եւ ոչ ալ տաճիկները միշտ այսպէս փառահեղ: Այդ օրը դուրս պակս պարսկեր ըլլալուն, մայրաքաղաքը բազմաթիւ հանդիսաւորութեամբ կը հրճուէր:

—Նա, Մայր եկեղեցին ու Պատրիարքարանը, ըսին բեռնակիրները երբ նեղ փողոցի մը բերանը հասան:

Փողոցն ու շրջականները լեցուն էին հայերով: Ժամ ու պատրիարքարան մտնող մտնողի ելլող ելլողի: Հայաստանցի տէրտէրը հիացած կը մտար: Խորունկ ուրախութիւն զգաց: Եթէ տաճիկները փառահեղ կը թուէին, հայերն ալ կեանք մը կը ներկայացնէին: Բիշ մը առաջուն կակիճը փարատեցաւ:

—Օխ, օխ, աս ի՞նչ աղուր բան է. կըսէր ինքնիրեն: Զորս կողմը կը նայէր: Արշամը կամ ուրիշ ծանօթ մը տեսնելու: Ոչ ոք: Խորունկեամ ժողովուրդն որ տաճարը կը մտնէր, զինքն ալ քչեց ներս տարաւ: Խորանին վարագոյրը փակ էր. սեղանին վրայ շատ մը աշխարհականներ կային: Տէրտէրը բան մը չէր հասկնար: Միթէ Պոլսոյ եկեղեցիներուն կարգն

կանոններն ասո՞նք էին: Մէկէնիմէկ քար կը տրած միաց: Սեղանին վրայ գտնուողներն մէկը ալ Արշամն էր: Վարժապետը ֆէսը հանեց նետեց, ու բազուկները խաչաձեւ, սկսաւ խոսիլ: Տէրտէրը որոշակի չէր կրնար լսել անոր բոլոր ըսածները, բայց իմիջի այլոց իմացաւ.— Այսօր՝ երգրում, վողը՝ Մուշ, յաջորդ օրը՝ Վան, ու ամբողջ Հայաստան: Պիտի ջարդեն, եղբարք, պիտի ջարդեն: Հիմի՛ էլ լսենք:

«Հիմի՛ էլ լսենք» ժայթքեցաւ ժողովուրդին բերնէն, միաձոյլ զանգուածի մը նման, մէկ թափով, ինչպէս թնդանօթի բերնէն արձակուած առմըր: Ու բոմբւնը բոմբւնին հետեւն: Տաճարէն բակը բակէն տաճարը կը պայթէին շրջապատները. ու «օ՛հ ի նըլտըզ» գոռումը կը թնդացնէր եկեղեցին ու շրջափակը: Դառնէն մեծափառ մօրուքով եկեղեցական մը զոգողալով առաջ կուգար խումբ մը երիտասարդներէ պաշարուած: Ժողովուրդը ճամբայ կը բանար: —Աս ո՞վ է, հարցուց տէր Թուսիկ քովինն: —Պատրիարքն է, Պատրիարքն է, պատասխանեց մարդը:

(Շարունակելի)

Սօֆիայի մէջ տնտեսի արկածի մը դժբաղդ զոհերն եղան երկու հայեր, Խորհրդային Միջազգային Եւ Նորարարութեան Այս երկուքին յուղարկաւորութեան տխուր հանգէսը կատարուեցաւ ամսոյս 10ին մայրաքաղաքին մէջ հոծ բազմութեան մը ներկայութեան:

ՊՈԼԿԱՐԻԱ ՎԷ ԹՈՒՐԳԻԱ

Թիւրքիա վէ Պոլկարիա պէյ-նինտէ միւնիստրատիւր բօլիթի-գիյէ կիւն պէ կիւն կէրկին պիր հալ քէսպ իթմէքտէ տիր:

Պապը Ալի Բուսիանըն շու բէ-րիշանիյէթինտէն իսթիֆատէ ի-տէրէք, Պոլկարիայ պիր տէրս վէրմէք էֆքեարը խաֆիսի ի-լէ, պիր թարաֆտան Մաքէ-թանիատա Բուս հայտուտարըն վասիթասը իլէ պուկարարըն հիտտէթէնտիրմէկէ վէ տիկէր թարաֆտան Պոլկարիատան չէ-թալար կիրէճէք տէյուպ, գու-վէի ասքէրիյէսինի Մաքէթա-նիա վիլայէթիւրիտէ վէ խու-սուսի իլէ սինօր պօյուստա արթըրմագտա տըր: Պուսիար-տան մատա Պապը Ալի պու տէֆա Եէնի պիր տէսիսէ պու-մուշ տըր կէսեա Պոլկարիատա Պոլկարար թիւրքիւրի էյմէք-տէ իմիշէր: Հալպուքի էկէր Պոլկարիատա պիր էյիլմէք վար իսէ, վէրկիլէրին աղըրլաշմա-սը տըր: պու տէ խալմարա մախսուս օլմայուպ, պիւթիւն էհալի իշիւն տիր: Պապը Ալի քէնտի կէօղիւ էօնիւնտէ Բիւրտ վէ Արնաւուտ հայտուտարըն էլի իլէ պիւթիւն քէօյլէր վէ գա-զալար (Սասուն, Մուշ վէ վան կիպի) թախիզ օլընտըղընը պին-լէրճէ խրիսթիան գըրըլտըղընը վէ հէր կիւն գըրըլմագտա օլտը-ղընը կէօրէմէյուպ տէ, Պոլկա-րիատաքի իսթրահաթտա պուլը-նան իսլամարըն սըղըլթընընը նէ՝ գօլայ կէօրիւշ իշիտմիշ: Փագաթ Սթանպուլտաքի Պոլկա-րիա մասլահաթիւղարը Մ. Նա-չէվիշ Պապը Ալիին իշթիքա-սընա բէք կիւղէլ ճէվապ վէրմիշ տիր: Եանի պիր էճնէպի գօթի-սիօնը վասիթասը իլէ Պոլկա-րիատա իսլամարըն վէ Մաքէ-թանիատա Պոլկարարըն անվալի թահգիզ վէ մուսլէնէ օլընտըն տէմիշ: Մ. Նաչէվիշ էրմէնիս տանտաքի էրմէնիլէրին անվա-լինի տախի իլալէ իթմիշ օլտ իտի տահա զիյատէ ճէվապը սէ-վապ վէրմիշ օլաճագ ըտը:

Նիհայէթ պու կիւն թիւրքիա վէ Պոլկարիա բօլիթիգատը կէր-կին պիր հալտէ իսէ տէ, Փէյ-բէնս Փէրտինանտըն էվլէլ Պէր-լինէ վէ սօնրա Լօնտրայա տա-վէթ օլընուպ, իմբէրաթօր վէ գրալ իլէ կէօրիւշմէրի պէլքի կէրկինիկի ուճ տէրէճէյէ կէօ-

թիւրմէքիլին՝ Մաքէթանիատա Եա-միւքէմմէլ պիր իսլահաթ վէ Եախստ Պոլկարիայա ինկիլթէրա թարաֆընտան մուսլէնէթ հու-սուլա կէթիւրէճէք զանն իտէրիլ:

ՀՍՎՍՏԻՍԱԹ

ԹԻԻՐԳԻԱ

Ախրէն Սթանպուլտան գաշմըշ օլտ պիր թագըմ բաշալար վէ բօշալար պուստան էվլէլ Սու-թան Համիտին սատըգ պէնտէ-կեանը վէ Եալէրլէրի իքէն, շիմտի սէր խաֆիյէնին թաագի-պինտէն գուրթուլմագ իշիւն գաշ-տըղարընը թէլէկարաթ պիւթի-միշտի: Պապը թարաֆտան տախի պիւթիլթիլի իւլըն, մէշքիւր ֆիրարիլէր Սուլթանըն էօմրիւնէ սուի գասթ իթմէք թէտպիրին-տէ իմիշէր, վէ պու սէպէպլէ սէր խաֆիէ անլէրի թաագիպ ի-տէր իմիշ: Տիկէր թարաֆտան սէր խաֆիէնին իթթիւր իթթիլի իտուտա օլընտըր: Փագաթ Արիֆ բաշանըն սէրայտան մուհիմ էվ-րագար ալուպ կէթիւրմէսի է-կէր սահիճ օլուպ տէ անլէրի նէշը իթթիւրմէք աղիլիկինտէ պուլը-նըր իսէ՝ շիմտիյէ գատար կէօ-թէրտիկի բէղալէթ էհալի ին-տինտէ աֆլ օլընաճագ տըր: Բիւս պիլըր նէ՝ սըրլար, նէ՝ ճիւտ-յէթլէր վէ նէ՝ շէրիքլէր մէյ-տանա չըգաճագ:

Մաքէթանիա

Մանաստըր վիլայէթի տա-խիլինտէ պիր Բուս բաբասըն գաթլինտէն տօլայը թէվլըթ օ-լընան 100 քիշիտէն 83 ը սէր-պէսթ պըրագըլուպ, 17 սի պիլա իսթիլթագ մահպուտա տըր-լար:

—Սէլանիկ վիլայէթինտէ Ար-խանկէլ մանաստըրըն Ուլահ վա-նահայըր պուկարարա տօթ օլ-տըղընտան Բուսլար անը գաթլ իտէրէք՝ անլէրին պիր Բուս բահիպը թային իթթիլէր:

—Պիր Բուս չէթասըր Գօթիւր գազասընտա պիր պուկար քէօ-յիւնէ կիրուպ բաբասըր գաթլ իթ-տիլէր, վէ Եքի պուկար գար-տալար, պիր Ուլահ մախսուլը իլէ պէրապէր վէ մուսթարըն զէվճէսինի Եարէլէտիլէր:

—Շու սըրա Մանասթըր գա-զասընտա 7 Բուս չէթալար պու-լընարագ, Ուլահ վէ Պոլկար քէօյլիլէրի տէնչէթտէ պը-րագըլլար տըր:

—Եիկիլիլի կիւն մուգգատտէմ 15 քիշիլիք պիր Բուս չէթասըր Ուլահ քէօյլիւնէ կիրուպ 6 քի-շի [2 սի բաբաս] գաթլ իթմիշ: Նահիրէ միւտիւրիւ պու ճիւտ-յէթլի Պոլկարարա աթֆ իթ-մէք իսթէմիշ իսէտի իճրա օլը-նան թահգիզաթտան ճանիլէ-

րին Բուս օլտըղարը թէպէ-յիւն իթմիշ տիր:

—Մէթթօլիցանըն միւֆթիսի Հալիմ էֆէնտի պիր Արնա վուտըն գուրշուրնտան աղըր-ճա Եարէլէնմիշ օլարագ էօլ-տիւ: Գաթլիլինի կէօեա հիւ-քիւմէթ թաագիպ իտէր իմիշ:

Արապիստան ըսեանը

Սթանպուլտան էնֆօրմասիօնա թէլէկարաթլէ պիւթիլթիլի տիր: Ենէմէնտէն բէք ֆէնա խապէր-լէր իշիտիլիյօր: օրատա ըսեան կիւն պէ կիւն Եալըլմագտա տըր: Գըյամ Սաատատան Սանանըն շիմալի ճիւլէթինէ Եալըլմէք տըր: Ասորէստան վիլայէթի տախի գա-րըլլէք տըր: Չօք նօգթալարտա թիւրք ասքէրի սահա մուգալէ-մէթէ տէվլամ իթմէք իսթմէ-յօր: Հէր կիւն ասքէրլէրտէն պիր չօլը գաշըյօրլար: Հիճէհտէ 2,000 ասքէր վէ 4 թօք մէվճուտ իսէտէ անվալը ալըր տըր:

Սլ ճիւղարա ասքէր վէ մուհիմ-մաթ նագլի ուկուսնաղ պիր հալ-տէ, վէ Պապը Ալիտէն վէրիլէն միւսթաճէլ էմիլլէրէ մուգայիլ օլարագ, իսթիլլալիլէթ (ինք-նալարուլթիւն) իսթէյէն Արապ-լարըն հարէքէթիլին ալ միւտ-տէթ գարֆընտա զապլ իթմէք միւշքիւլ կէօրիւնիյօր:

—Տէօրտ թօրլէ 5,000 ասքէր պուլընան Սանաք չէհրիլի Ա-րապլար մուհասէրէ իտուպ զապլ իթմիշէր:

—Սթանպուլտան Լօնտրայա ի-շար օլընտըղընա կէօրէ, թիւրք հիւքիւմէթի Ենէմէնէ կէօնտէր-մէք իշիւն 40,000 ասքէր հաղըր լանմագտա տըր:

Ի Ո Ի Մ Ս Ն Ի Ա

Մաքէթանիատա Բուսլար Գու-ցօ-Ուլահ էհալիլէ տախի զատր ու ճէֆա վէրմէքտէ օլտըղա-րընտան, Պուգըրէյտէ կէյէն բա-զար կիւնիւ պէօյիւք պիր մի-թիլիկ լէճէճիմիւ օլընաճագ ըտը: Փագաթ պու նիւմայիլլէ Բուսա-նիա էհալիսինի տախի թիւր-քիւլայա գարըր թահրիգ իթմէ մէք իշիւն, օրանըն Օսմանլը էլ-չիսի հիւքիւմէթիւնտէն աւտըր թալիմաթ իւլըրէ, Մաքէթանիա-տա Գուցօ-Ուլահ էհալիլինի էգհէր ճիւլէթ մուհաֆապ օլընաճագընը Պապը Ալի թարաֆընտան վատ իթտի: վէ պու սէպէպլէ միթիլիկ լէճէթիլ օլընտը:

Մ Ո Ւ Հ Ա Ր Ե Պ Ե

Մանչուրիատան վիրուպ ի-տէն հալմատիւթ Բուսլարըն պիլա մուգալէմէթ ճարօնլը-լարըն էօնիւնտէն գաշմայա տէ-վամ իթթիլթիլինի պիւթիլթի-յօրլար: Ենէն Սէրասքէր Ժէ նէրալ Լինուլիլին սօն թէլէ-

կրաֆլարը տախի այնը հալա-տիսաթը թաստիգ իտէյօր Եա-նի քէօրիւլէրի վէ Եօլլարը պօղարագ Բուսլար գաշիյօրլար վէ բէվայէթէ կէօրէ, Խարպի-նի տախի պըրագուպ տահա իշէրի կիթմէք իշիւն հաղըր-լանըրլար ըմըշ: Շու սօն հաֆ-թալար գարֆընտա Խարպիլէ 50000 խասթա նագլ օլընմըշ:

—Բուսլար Մուգտէնտէն չըգ-տըղտան սօնրա Եէրլի Ձինլի-լէր օրատա գալմըշ օլտ վէ խասթա թէտալի իտէն Բուս գատընլարը վէ տիկէր պիր թագըմ խրիսթիանլարը գաթլ իթմիշէր:

—Գուրօթթիլին ընէմաը իւլըրէ, Չար անը պիրինճի օր-տույա գօմանտան թային իթ-միշ: Վիրա Գուրօթթիլին մահ-զուրիյէթլէ Բէթէրպուրկա ալ-տէթ իթմէքտէն իսէ՝ մէյտա-նը մուհարէպէտէ սէճաթ կէօս-թէրմէք վէ սէրասքէրլիկ Եա-րաւատը իսէ՝ ճէսուր պիր ա-քէր օլտըղընը ըսպաթ իթմէք իսթմիշէր:

—Եագընտա 120,000 Եէնի Բուս ասքէրէի Ժէնէրալէ Լինէվիլէ կէօնտէրիլէճէք իմիշ: Փագաթ պու Եէնի ասքէրլէր մուհարէ-պէ մահէլինէ Եէթիլթիլէն սօնրա սիլահ վէրիլէճէք: Վիրա Բուսիա տախիլինտէ Եէնի աս-քէրլէրէ սիլահ վէրմէքտէն հիւ-քիւմէթ գօրգիյօր:

ԹԻԻՐՃՃԱՐԻՅԷ

ՎԱՌԵԱ,	մարտ 12
ՋԱՌԻԲԷ	
ՊՈԼԿԱՐԱՅ	
Վալիս	54-60 լիպ. 9.80 / 12.10
Արապ	52-62 լիպ. 9 / 12. 40
ԱՐԲԱ,	
Վալիս	100 քիւ Կին 11.20/11.80

Արապ 42-45 լիպ. 7.20/7.40

ԵՈԼԱՅԱՐԱՅԱՅ 33/36 լպ. 5. 20/5.70	
Վալիս 100 քիւ	10. 60/10. 75
ՃԱՍՈՒԼԵՆ	100 քիւ - 25-27
Արապ 100 քիւ	23-25
ՏԱՐԸ արապ Կէքթ.	14-15
ԳՕԼՕԶ արապ 55-60 լպ.	10. 50/12
ՄԻՍԻՐ 57-58 լպ	7. /8. 80
« 100 քիւ	11. 20 - 11. 90
ՋԱՎՏԱՐ արապ 8	—/8. 20
« 100 քիւ	11.80/12
Կիւնտէ 30 - 40 վալիս 15	—20
արապ կէլմէքտէ, վալիս մուսթէլէսի	
նարօլէճ 20 քիւ. արապ մուսթէլէսի	
նարօլէճ 20. 20 :	

ՍԱՐԱՅԻՅԷ

Նարօլէճ 20, 20 քիւնք	
Օսմ. լիւրսը 22, 75 ալթուս քիւնք	
ՊԱՊԱԼԻՅԷ	
Վարնա քիւնքտա պագալիլէ	
մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալթուս	
քիւնք իլէ :	
ԳԱՀՎԷ	1,95/2 10
ՇԷԲԷՐ ՆԷՄԷ	81
ՇԷԲԷՐ քէսթի սանրը	42. —
Բիւրիւն ձիւլիլէ չուլար	45 .
» ձարոն »	35 .
» Ինկիլիլ »	27.50
» Բիլլի »	50
ԿԱԶ, սանրը	9. 50
ՉԷԹԻՆ Եագը քիւ	85.—1
ԳՈՒՐՈՒԼԵԳԻՄ	25